



ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԱՅԻ

Գերաշնորհ Ս. Վահան Եպս Յովհաննէսեան Առաջնորդ

DIOCÈSE DE FRANCE DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE

Son Excellence Monseigneur Vahan Hovhannessian, Primat de France

ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մխիթարութեան եւ հոգեւոր խնդութեան զգացումով Ֆրանսայի Հայոց Առաջնորդարանը կը յայտնէ, որ յառաջիկայ Կիրակի 14 Ապրիլին՝ Ծաղկազարդի տօնին, ժամը 11:30-ին, պիտի կատարուի Նիսի Սուրբ Մարիամ Աստուածածին Եկեղեցոյ Խորանի վերածումն ու եկեղեցոյ վերաբացումը, որմէ ետք պիտի մատուցուի հանդիսաւոր Սուրբ եւ Անմահ Պատարագ:

Անցեալ երէք տարիներու ընթացքին զանազան քայլեր՝ նեռարեալ Նիսի Սուրբ Մարիամ Աստուածածին Եկեղեցոյ համայնքի, 7 Ապրիլ 2019 թուակիր արտահերթ Ընդհանուր Անդամական Ժողովը որուն ընթացքին իր կայացուցած որոշումը՝ ետ վերադարնալու թեմին կազմէն ներս եւ ընդունելու թեմական գործող կանոնագրութիւնը, ինչպէս նաեւ Ֆրանսայի Հայոց Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի նամակը ուղղուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, կարելի ըրին Նիսի Սուրբ Մարիամ Աստուածածին Եկեղեցոյ վերադարձը Մայր Եկեղեցոյ գիրկը՝ Ֆրանսայի Հայոց Թեմի կազմէն ներս:

Համայնքի կեանքէն ներս այս կարեւոր ու պատմական օրուան նուիրուած սրբազան արարողութիւնները պիտի կատարէ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեան որ հաւատացեալներուն պիտի փոխանցէ նաեւ Ամենայն Հայոց Հայրապետին օրհնութիւնը:

Գերաշնորհ Առաջնորդ Սրբազանն ու Թեմական Խորհուրդին անդամները իրենց արտագին շնորհակալութիւններն ու բարձր գնահատանքը կը յայտնեն Նիսի Ս. Ֆիլիպ Եկեղեցոյ ծխական Խորհուրդի անդամներուն եւ հաւատացեալներուն իրենց ուղղամտութեան եւ հաւատարմութեան համար. որոնք վերջին տարիներու ընթացքին հավատարիմ մնացին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ կանոններուն, Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին: Մենք կը շնորհավորենք Նիսի եւ Ֆրանսիայի մեր հայրենակիցներուն այս պատմական քայլի համար ի նպաստ մեր ժողովուրդի եւ Եկեղեցոյ միասնութեան, ամրապնդման եւ յաջողութեան:

###

Փարիզ, 12 Ապրիլ, 2019